



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

էլ. աստի: info_gavar@aarhus.am

N AA - 008

« 07 » Հունիսի 2015թ

**ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների
նախարար՝ պարոն Է. Քախարյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քախարյան

Բնական ջրահոսքերի վրա կառուցված ու կառուցվող փոքր ՀԷԿ-երի կողմից ՀԷԾ-ի նստարկող էլեկտրաէներգիայի խրախուսական բարձր սակագիրը (21.168 դրամ առանց ԱԱՀ) ու ՀԷԾ-ի կողմից դրա գնման երաշխավորված ժամանակահատվածը (15 տարի) մինչև 2013թ. սահմանված էր մինչև 10 ՄՎտ հզորությամբ ՓՀԷԿ-երի համար: Մակայն 2013թ. ՀՀ Էներգետիկայի մասին օրենքում կատարվեց փոփոխություն, ըստ որի ՓՀԷԿ-ի կարգավիճակ ունեցող ՀԷԿ-երի համար հզորության վերին սահմանը եռապատկվեց ու սահմանվեց 30 ՄՎտ:

Բազմիցս քննարկումներ են տեղի ունեցել վերոնշյալ թեմայով, վերջին քննարկման ժամանակ /Երևանի պետական համալսարանի Կայան զարգացման կենտրոն/ ներկայացվեց եվրոպական երկրների օրինակներ, որտեղ ՓՀԷԿ-րի մաքսիմալ հզորությունը սահմանված է մինչև 10 ՄՎտ, հարց բարձրացվեց, թե ինչու՞ մեր երկրում կատարվեց այդ փոփոխությունը, որը մնաց անպատասխան:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինաի համաձայնագրից և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրինու կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն:

1. Կշված բարեփոխման հետևանքով ո՞ր ՀԷԿ-րն են վերափոխվել փոքր ՀԷԿ-րի,
2. Ո՞վքեր են այդ ՓՀԷԿ-րի սեփականատերերը /տրամադրել ցանկը/

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (ՅՕօրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված II) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որիև կարող եմ ուղղել հարցումը:

Մանիալ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրինու կենտրոնի համակարգող՝

L. Մանյան